ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 դեկտեմբերի 2021 թվականի N 1989 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱ-ԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 18-Ի N 1346-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԵՎՐՈՊԼԱՍՏ 999» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 1346-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) հավելվածը 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-4-րդ կետերով.

«

2.	3904100009	ՊՎՔ-ի հումք	Պվք հումքը պոլիվինիլային հիմքով սինթետիկ պլաստիկ պոլիմեր է: Սպիտակ է, փոշենման, ջերմակայուն: Լինում է երկու հիմնական ձևի՝ կոշտ և փափուկ: Կոշտ ՊՎՔ-ն օգտագործվում է շինարարական նպատակով ՝ օգտագործվող խողովակների և պրոֆիլների արտադրության համար: Ենթարկվում է էստրոգիոն մշակման:	կգ	400 000	Չինաստան, Ուզբեկստան, ԱՄՆ, Հարավային Կորեա	Չինաստան, Ուզբեկստան, ԱՄՆ, Հարավային Կորեա	302 843 000	
3.	2509000000	Կալցիումի կարբոնատ	Կալցիումի կարբոնատը սովորական նյութ է, որը հայտանբերվում է կալցիումի արագոնիտի միներալների տեսքով՝ հիմնականում որպես կրաքար, որը նստվածքային ապարների տեսակ է, որը հիմնականում կազմված է կալցիտից:	կգ	200 000	Չինաստան, Ուզբեկստան, ԱՄՆ, Հարավային Կորեա	Չինաստան, Ուզբեկստան, ԱՄՆ, Հարավային Կորեա	151 421 000	
4.	3812390000	Կայունա-ռար	Մեկ բաղադրիչով կապարի հիմքով կայունարար՝ նախատեսված կոշտ ՊՎՔ պրոֆիլների արտադրության համար: Այս կայունարարն ունի արդյունավետ քսանյութերի բավարար հավաքածու, ինչն ավելորդ է դարձնում լրացուցիչ քսանյութերի	կգ	400 000	Չինաստան, Ուզբեկստան, ԱՄՆ, Հարավային Կորեա	Չինաստան, Ուզբեկստան, ԱՄՆ, Հարավային Կորեա	302 840 870	

			օգտագործումը: Ապահովում է բարձր ջերմաստիճանի դիմադրություն, հոսքագծի հանկարծակի կանգ առնելու դեպքում:						

».

2) «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «757 104 870» թիվը փոխարինել «1 514 209 740» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

09.12.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ